

Մ. Հասարայան
Ֆիլոլոգ. գիտ. թեկնածու

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ¹

1852 թ. նշանավոր բանասեր, բժիշկ Գ. Ախվերդյանին իր երկարամյա գիտական և բարեխիղճ աշխատանքից հետո, առանձին գրքով, բնագր՝ ձակ ներածականով ու ծանոթագրություններով, լույս ընծայեց Սայաթ-Նովայի 46 հայերեն խաղերը: Այդ բոլոր խաղերը նա վերծանել էր հենց իրեն՝ եռուսե ձևերով վրացատառ գրված անձնական դավիթարից-սողարարից: Երգչի հայերեն խաղերի գանկը հարստացավ Ախվերդյանի կազմած ժողովածուի հրատարակությունից 50 տարի հետո, երբ 1903 թ. «Ազգադրական հանդեսի» 10-րդ գրքում լույս տեսան նրա 8-նոր խաղերը, որոնց մասին և այստեղ կլինի մեր խոսքը: Ըրանք, մինչ այդ արդեն հայանի հայերեն 18-րդ խաղերի և երգչի 26 աղբրեմաներին, 26 վրացերեն և մի քանի հատ հառն լեզուներով գրված խաղերի հեա պահվելիս են եղել Պետերբուրգում, Գիտությունների Ակադեմիայի Ասիական Թանգարանի վրաց ձեռագրերի բաժնում: Այդ ժողովածուն 1823 թ., վրաց արքայազն Խեյմուրազի պատվերով, կազմել է Սայաթ-Նովայի կրտսեր որդի Յովանեն (Օհանյ) և, բնական է, որ քոլորը գրված են վրացատառ:

Պետերբուրգում պահվող այդ ձեռագիր ասղարանից է, որ հանդուցյալ բանասեր Գ. Ասատուրը (Ախվերդյանից հետո երկրորդ անձնավորությունը, որ մեծ դործ է կատարել սայաթնովտղիսությունից մեջ) 1892 թ. տոաջին անգամ վերծանում է այս խաղերը և 12 տարի հետո հրատարակ հանում «Ազգադրական հանդես»-ում:

Հրատարակման առիթով գրած իր ներածական խոսքում Գ. Ասատուրն, ի միջի այլոց, ասում է.

«Գրի է տուել այդ մատյանը 1823-ին (մատյանում մի տեղ նշանակված է 23 մարտի 1823 թ.) Պետերբուրգում Խեյմուրազ արքայազնի պատվերով Սայաթ-Նովայի որդի Յովանեն, որը իրան տեղ-տեղ «Բժիտն Սայադով» է անվանում: Ահա ինչ է ասում մատյանի հիշատակարանը... («Այս մատյանը պատկանում է Վրաստանի թագավորի որդի Խեյմուրազին, գրի առավ Սայաթ-Նովայի որդի Յովանեն իր հայր Սայաթ-Նովայի երգերը իրեն նրան հիշատակ»):

...Մատյանի կարդալը ներկայացնում է դժվարություններ: Գուցե մասամբ այս հանգամանքն է եղել պատճառը, որ ոմանք գիտենալով նրա գոյություն մասին, այնուամենայնիվ ձեռք չեն դարկել նրա ուսումնասիրու-

¹ Այս հոդվածն բնկ. Մ. Հասարայանի «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի տեքստի բնութագրեր և մեկնություններ» խորա իրը կրող, գիտությունների թեկնածուի առթիճանի համար պաշտպանած, դիսերտացիոն աշխատության մի հատվածն է՝ որոշ փոփոխություններով, համա:

թյան: Ուսումնասիրողը պետք է ծանոթ լինի ոչ թե միայն Թիֆլիսի հայերեն, վրացերեն և թուրքերեն բարբառների հետ, այլև աշուղական լեզվի, արվեստի հետ: Ձեռագիրը բառացի կարդալով հետևանքի չի կարելի հանդել: Պետք է կարդալ ամբողջ գուշակելով, սրբազրկելով: Այս ևս պետք է ի նկատի ունենալ, որ վրաց գիրը չի կարողանում արտահայտել հայ և թուրք լեզուների հնչյունները և այդ երգերի գրի առնողը կրթությունից զուրկ և կիսազրազեա մարդ էր: Օհանը շատ անգամ չըմբռնելով հոր դորժածած շատ բառեր և դարձվածքներ, մեջ է բերում նրանց վայրիվերո և շատ տեղ միջնացնում և աղավաղում է բնագիրը: Շատ անգամ ևս կարգացել էմ ամբողջ ենթադրելով, քան թե կարելի է առաժառակ դուրս բերել ձեռագրից: Հիշատակարանումս նրանք մտնում էին ամբողջ ուղղված, սրբազրկված: Բայց ի նկատի ունենալով այն, որ ես միջոց և ժամանակ չեմ ունեցել լիովին ուսումնասիրելու ձեռագիրը, իմ ընթերցումը չպետք է համարել բոլորովին անթերի և վերջնական: («Ազգագրական հանդես», 1903 թ., դիրք 10, էջ 95, 98—99):

Մեր ձեռքի տակ ունենալով Լենինգրադում գտնվող հիշյալ մատյանի ֆոտո-պատճենը, հնարավորություն ունենք Գ. Ասատուրի վերծանությամբ հրատարակված ութ խաղերի համեմատությունը ևս կատարել բնագրի արժեք ներկայացնող այդ ձեռագրի հետ: Իրոք՝ հրատարակված խաղերի մեջ կան բավականին թերություններ և սխալներ, որոնց պատճառներից մեկն էլ, Գ. Ասատուրի հասցեագրատարելուց բացի, երգչի որդու անվույթ և սխալներով լի բարդ ձեռագիրն է, որը ոչ մի համեմատության մեջ չի կարելի դնել նրա հոր՝ Սայաթ-Նովայի հետակ ու հաստատուն ձեռագրի հետ, մանավանդ որ Օհանը (Յովանեն) այդ ժամանակ մոտ 60 տարեկան է եղել: Ի դեպ՝ չնայած ձեռագրի այս թերություններին, նա բնավ էլ կրթությունից զուրկ և կիսազրազեա մարդ չի եղել, ինչպես գրում է Գ. Ասատուրը: «Կիսամուրազ մի սըպանի» խաղի ծանոթագրության մեջ Օհանը մի չափածո քառատողով հայտնում է, որ շտապ է գրել (վրաց արքայազն Թեյմուրազն է շտապեցրել) և, բացի դրանից՝ աչքերն էլ վատ են տեսնելիս եղել:—«Էավ չղրեցի նրա համար, որ հրաման կար՝ «շուտ» միայն ևս չեմ սխալվում, որ աչքերիս անհամապատասխան էր ակնոց» (բառացի՝ ինձ համար լավ չէր ակնոցը):

Երգչի ոճին ու լեզվին ծանոթ մարդը, ուշադիր կարդալիս, կնկատի, որ այս խաղերի լեզուն որոշ չափով տարբերվում է նրա սովորական լեզվից, որովհետև որդին բավականին աղատ խմբագրման է ենթարկել հոր գործերը:

Նա աշխատել է մեղմացնել հոր բարբառային լեզուն՝ որոշ բառեր ու քերականական կանոններ տալով մոտավորապես արդի գրականի ձևով: օրինակ՝ ոսկի բառը փոխարինել է ասկի, ինչպես նաև թիֆլիսահայ բարբառի որոշ խոնարհումներ տալի է Լոսոու բարբառով: օր. բոլ օ-ը գրում է բոլու¹ կամ թե վե-ն գրում է միև, դիար է- դժվար տ և այլն: Չմոռանանք, որ Երգչի

¹ Այս ձևի խոնարհումը հայտնի է մեր միջնադարյան լեզվում, ժանափանդ աղեր-դուներին Երկերում: օրինակ՝ տոնուս, զսնում (ըզձ. առաջին դեմք), հեսնուն (նազ. փու-շակ), հեսնում (Գր. Ախթամ.) և այլն:

որդի Օհանի խմբագրումները կատարված են 1823 թ., ուստի շատ հետաքրքրական են և հատուկ ուշադրութեան արժանի, մանավանդ որ կարելի է ենթադրել, թե այս խաղերը և սրանց հետ պրի առնված հայերեն մյուս 18 հայտնի խաղերի վարիանտները կարող են մասամբ խմբագրված լինել նաև իրեն՝ հեղինակի կողմից, որովհետև այս փաստերը փոքր չափով նկատելի են և իր՝ Սայաթ-Նովայի անձնական ձեռագրում:

Այժմ անցնենք խաղերին նույն հաջորդականությամբ, ինչպես տպագրված են «Հայ Գրողների Կովկասյան Ընկերութեան» և Գ. Լևոնյանի խմբագրությամբ յույս տեսած «Սայաթ-Նովա» ժողովածուների մեջ:

Խաղ ԽԷ. —

Աչկ ու ունքրթ վեր իս թողի, Էեֆիւրք տննաւի բարաթ.

Աջափ, քիզ ք սչ գեթ իմ արի — խոսում իս դու չարի բարաթ.

Ովոր քիս խալեն մրտիկ տա¹, սիրտըն դարնա քարի բարաթ

Թեզուզ պահե, թեզուզ սպանե գրբանրթ նոքարի բարաթ:

5 Գրբանրթ նոքար չիս պահի, թաքաուր² իս՝ դուլ սրպանոդ.

Խոսկրս տրակով իմացի, գաւրտ տսզդ, փուզուլ սրպանոդ.

Էացվիլ իս բաղի միշումրն, կարմիր վարթ բուլբուլ սրպանոդ.

Կարիլ տու քանի կտրում է³ — քու թուրըն⁴ սարդարի բարաթ:

Յար, ինձ մե ճամփա կանգնեցրու՝ — կենամ խաթրըջումի նըման.

10 Գիշիր ու ցերեկ լալիս իմ, աչկիրքս է նամի նըման:

Թող պրբանրթ նընդած ոլիմ օտար բարեկամի նըման:

Անգալուն Ասաուաձ սպանե, Փահրադ Շիրին դարի բարաթ:

Գարնան շնչի ծախի նըման կարմիր վարթըն բաց է ըլում.

Ինչ օրուտ է քու բազմընչուն, փուր բուլբուլըն բաց է ըլում.

15 Պըրոշեմեթ միզր է՝ կաթում, թողնիս⁵, յախեթ թաց է ըլում,

Էնդուր համա քաղցր իս խոսում — լիզութ է շաքարի բարաթ:

Մարթ իր խոսկով կու ճանանչվի, դուզե Շահի վեղիր շինին.

Բեզաւըն աւըլ չի դարնա, թեզուզ վեղիր, նաղիր շինին.

Թե կու մրհաս, ամեման քիզ էու հաւտըր՝ հաղիր շինին.

Սայաթ-Նովա, խոսկրթ ասա — չըլի համու դարի բարաթ:

Խաղի առաջին տողի երկրորդ մասը բնագրում բոլորովին այլ բան է: Գ. Ասատուրը ենթադրաբար է գրել «Էեֆիւրք տննաւի»... բառերը: Բնագրում գրված է.

— «Աչկուունրթ վերիս թողիլ հալքմք վաւիս սաւի բաւտք», կամ՝ հուֆթիմք վերուս չաւի բաւտք, կամ թե՛ հուֆթիմք մերիլս, կամ՝ մերուս, նույն ձևի վերկաւ, մեկուս չաւի բաւտք:

Երկրորդ տողը հետևյալն է.

«Ասար քիզ ինչ գեթ իմ արի — խոսում իս դուրսաւի բարաթ»:

«Գուրչարը» պետք է ընդունել դուս սաւի բարաթ, ինչպես ճիշտ կարդացել է Գ. Ասատուրը, հանելով ավելորդ բն, որն ըստ երևույթին սխալմամբ գրված է ն-ի փոխարեն: Եվ որովհետև երկրորդ տողում սաւի բաւտք

1 Բնագրում — մտուր տա. 2 Թարալուր. 3 կտրում ա. 4 Թուրնթ. 5 Յար ինձի մե ճամփի կանգնեցու. 6 միզր ա. 7 Թողուս:

(չարի նման) հանդավոր բառերը կան, ապա չի կարելի բնավ առաջին առդի «չարի բարաթ»-ը ևս նույն իմաստով հասկանալ, որովհետև այս դեպքում կասկածի առկա պետք է առնել երկրորդ առդի այս նույն բառերը, որի առիթը չկա: Այս երկրորդ առդի իմաստը պարզ է. — արդյոք քեզ ի՞նչ վնաս է մտնել, որ դու խոսում ես չարի նման (չարացած): Մնում է առաջին առդի այդ անընթեռնելի բառերը զանազան վարիանտներով կարդալու փորձեր անել. օրինակ՝ «հուքաթ մեջ կա չարի բարաթ». բայց սա ամենից քիչ հավանականն է, որովհետև, նախ՝ հոգին հուքա չէր դրվի, երկրորդ՝ բացակայում է վերջին ունի և մտառը հազիվ թե անտեղի դրված լինի, մանավանդ որ այստեղ ենթադրվող մեջ բառը պարզ կարդացվում է վեր, կամ ափսոսանքով հավանական՝ մեր: Բացի անկասկած է, որ հուքամբ բառը պետք է կարդալ հուքմբ, որովհետև մեծտեղի ք-ն կամ վերջին ք-ի ազդեցությամբ է դրվել, որ սովորական երևույթ է սխալների մեջ, կամ, որ ափսոսանք հավանականն է, սխալ հուքմբ դրելուց հետո, դրոշմ անմիջապես զգացել է մտառի պակասը և շարունակություն մեջ դրել է մք, մոտանալով մեծտեղ բնկած առաջին ք-ն ֆեֆեու: Այստեղից պետք է եզրակացնել, որ աչք ու սառնքը վեր թողած (հուզված, ջղախնայած) յարի հուքմբ (հրաման) պետք է որևէ մի հրաման տվող մարդու նման լինի: Այդ պատճառով մենք առայժմ ենթադրում ենք, թե պետք է հաջորդ բառերը կարդալ մեքուս չարի բարաթ, այսինքն՝ մի ուսանիտն լազալսի նման: Եվ իրոք, թե՛ 18-րդ դարում և թե՛ 19-րդ ու 20-րդ դարերում, արևելյան երկրներում (Իրան, Թյուրքիա, Ադրբեյջան) ուսանական ցարին ասում էին և ասում են չար, իրենց լեզվում և այրուրենում ց հնչյունի և տառի բացակայություն պատճառով: Ճիշտ է, նրանց լեզուների բնահանուր կանոնից ելնելով, պետք է ասվեր սար, ինչպես եպո-ր արտասանվում է հուս, ցարեն-ը — սարեն և այլն. բայց եթե ցար-ը դարձել է չար և ոչ թե սար, ապա՝ թերևս այն պատճառով է այդ, որ արևելյան բունակալություն պայմաններում ոչ ոք չէր համարձակվի ուսանական թաղավորին ասել սար (որ պարսկերեն կնշանակեր զուխ, զլխավոր), որովհետև վիրավորական կլիներ իրենց շահերի, սուլթանների համար: Ուստի (առայժմ) մենք առաջարկում ենք այս տողը կարդալ հետևյալ ձևով.

«Աչկ ու սառնքա վեր իս թողի, հուքմտ մե ուսա չարի բարաթ» (կամ ցարի բարաթ²):

3-րդ առդ. («Ովոր քիզ խայեց մըտիկ տա, սիրտըն դարնա քարի բարաթ»):

Բնադրում դրված է.

«Ով քիզի խայեց մըտիկ տա սիրտն դարնա քարի բարաթ»:

(Ով քեզ նենդ աչքով, դավաճանի աչքով նայի՝ սիրտը քարանա):

6-րդ առդ.

«Խոսկըս արակով իմացի, դոհրա աստղ, փուղուլ սրպանող»:

Ըստ երևույթին երգչի որդի Օհանը, ազատ խմբադրման ենթարկելով հոր ստեղծագործությունները, ոչ միայն աշխատել է օտար բառերը հայերենացնել կամ բարբառային արտասանություններն արդի դրականի ձևը տալ,

1 Վեր- թիֆլիսահայ բարբառում նշանակում է ֆլաուս, մեղք. հայերեն զայր բառից:

2 Ի դեպ, այս երկու բառերն են միայն, որ երգչի և նրա որդու ձեռագրերում մեզ չհաջողվեց վերծանել առանց կասկածի. այդ պատճառով այս առաջարկն անում ենք մեծ հարցականով:

այլև երկու զեպրում հայերենը դարձրել է օտար (աղբրեջաներեն, արարերեն) շատ զործածական բառեր: Օրինակ՝ մէ խաղում երգիչն ասում է «արունուտ ջեյրան», իսկ որդու դրած օրինակում կարգում ենք «յարալու ջեյրան»: Այսակեղ բերված առում էլ, տնտարակույս, երգչի գրած Լուսնաստղ-ը որդին դարձրել է Զսիրա-աստղ (արար. Զոհրա—Արուսյակ), որով և մի վանկ ավելացել է առդի մեջ: Ուստի կամ պետք է դարձնել Լուսնաստղ, որը մի այլ խաղում ևս (ԽԱ) գործ է ածում հեղինակը, կամ թե Զոհրա բառի վերջի տ-ն պետք է հանել և դարձնել Զոհրաստղ: Այս առդի իմաստը հեռակայն է.— խոսկս առակով իմացիր. ավելի ճիշտ՝ ասածս փոխարեքական իմաստով հասկացիր, Լուսաստղ, մշուշ, աղջամուղջ ցրոց (փուռ[1] աղբր.— մշուշ, մառախուղ. մութ):

Վերջին երկու տողը.

«Թե կու մրնաս, ամենան տիղ քու հուճարըն հաղիր շինին».

Սայաթ-Նովա, խոսկըթ ասա - չըլի քամու դարի բարաթ»:

Ինչպես տեսնում ենք, այս տողերից ոչինչ չի հասկացվում, որովհետև հուճարը հոգիի չի դառնա և խոսքը քամու դարի՝ չի լինի:

Առաջին տողը բնագրում գրված է այսպես.

«Իթե կամես ամենան տիղ քուհու աղաթթ հաղիր շինեն»,

որ պետք է կարդալ.

«Թե կամենաս ամենան տիղ քու ասածտ հաղիր շինին».

իսկ վերջին տողը՝

«Սայաթ-Նովա, խոսկըթ ասա բելլի քամանդարի բարաթ»:

Թարգմանության մեջ կատարվի հետևյալը. «Թե ցանկանում ես, որ ամեն տեղ քո ասածը պատրաստ, իսկական իմաստով ընդունեն, Սայաթ-Նովա, խոսքդ ասա այնպես, ինչպես հոչակալոր նետաձիգը (նրա անվրեպ նետի պես)՝ երգիչը բելլի քամուցար (արար.—պարսկ.—հայտնի նետաձիգ) բառերի տակ նկատի ունի երեք ճահնամեի հերոսներից մեկին, հավանաբար՝ Բահրամ Բուրին»:

12-րդ տողի—«ունգտլլն Աստուած սըպանեն»-ն բնագրում գրված է— «անդալին աստված սըպանեն» կան և այլ մանր տարբերակներ, որոնց մի զգալի մասի ուղղումը Գ. Ասատուրի կողմից՝ միանգամայն ճիշտ և ընդունելի պետք է համարել, բայց ոչ այնպիսի. ինչպես Խնգալին-ը անդալին, կամ «մե ցանգի կանգնեցու»-ն—«մե ճամփա կանգնեցու» դարձնելը:

Միաժամանակ անհրաժեշտ էր Սայաթ-Նովայի տառադարձությունը պահպանել, որովհետև երգիչը դիմորոշ ղ հոգը միշտ գրում է տ, իսկ որդին, բիչ բացառությամբ՝ լ. երգիչը մեծ մասամբ տարբերում է ո և ր տառերը, իսկ այստեղ և հաջորդ խաղերում բոլոր կոչտ ո տառերը հայերեն ևս գրված են փափուկ ր-ով. Գ. Ասատուրը, օրինակ, հենց այս խաղի բնագրի 14-րդ տողի օգուղ ձևով գրված բառը դարձրել է օֆուտ, մինչդեռ 16-րդ տողի լիզուտ բառը՝ լիզութ:

Խաղ ԽԸ.—

Հընդկաց քաղաքիցըն հանած, ջափահիր քար արմանելու,

Ինչին գիպլիս՝ նաղըշ կոնիս, ոսկե փարզալ արմանելու.

1 Դար—նշանակում է՝ 1. նեղություն, զժվարություն (աղբր.) 2. կախազան (պարսկ.) և այլն:

2 Բնագրում—ինչի գիրչիս:

Ամեն մարթ չի կարա ճարի շահով շրքար արմանելու.

Մարթ հիզըթ չի կարող խոսի, Բոստումի Զալ արմանելու:

5 Շիմշատի ծար բըհամ էլլար, շենքըթ տաշիլըն ինչ կոնե.

էրանի¹ է քու տիրուշին յադին յաշիլըն ինչ կոնե.

էրեսըթ խասա մուրասա—դալամ քաշիլըն ինչ կոնե.

Կարմիր ու կանաչ ու ճերմակ, սարխար ալ արմանելու:

Դուն հիշտ դիմիշ անելու չիս, ճըրաք վարած, զըժար ճարած.

10 Ուլոր էրեսըթ կու տեանե, խիլքըն կու դարնա շըվարած,

Անդին յադուլթ, անդին ալմաս, բոլորքըթ² ջափահիր շարած,

Սկանդարի Զուլդարեն թողած, ջընաղ հեքալ արմանելու:

Համաշա սեյրան իս անում, վարթ ու մանիշակ³ քաղում իս.

Շուշա բրբուլե գուլարդան բերենթ վարթաջուր մաղում իս.

15 Թաքաուրի թաջի ջիդա, ոսկե թիլըթ շաղմաղում իս.

Վուրսնուրթի ձերիցըն փախած ջեյրան, մարալ արմանելու:

Ֆար, քիզանից հիրանալըս մերենկուս վրա զըժար ա.

էշխեմեթ ջունուն իմ դարի—ինչպես անիմ ինձի շարա.

Ավելի չէ Սայաթ-Նուին—քիզի ծարա ու նոքար ա.

Երբանից ձերքըթ քաշիլըն էա էլ շատ ա արմանելու:

Այս խոդի մեջ ութ անգամ գործածվող առանցքները բառը բնագործում չորս անգամ գրված է արմանալու, ամենաշինքիները գաղափարաբան և միայն երեք դեպքում՝ արմանելու (տող 3, 4 և 8). ուստի պետք է դարձրենք արմանալու:

5-րդ տողի «բըհամ էլլար»-ը բնագործում գրված է «բըհամ էկած»:

6-րդ տողի «յաշիլըն» բառը բնագործում լիաշինվ. է. Ասատուրն իրավացիորեն դարձրել է յաշիլըն, որն անշուշտ աշիլ-աշիլ (նայել) բառն է, կամ երկչի հոր, արեմտահայ լեզվից վերցրած. սկզբի յ(ի)-ն երեք արտագրողի սխալն է, կամ թե որեք, թերեւ թիֆլիսահայ, բարբառային ձև է:

9-րդ տող. «Դուն հիշտ դիմիշ անելու չիս, ճըրաք վարած, զըժար ճարած» բնագործում գրված է՝ «Դու հիշտ դիմիշ անելի չիս, ճրա վարած, զժվար ճարած». Դ. Ասատուրի սրբագրությունը կամ խմբագրության հետ, ինչպես այս տողում, այնպես և բաղմաթիվ այլ տողերում, որոնց մեծք չենք անդրադառնում, պետք է համաձայնել «Դուն հիշտ դիմիշ անելու չիս» նախադասությունը պետք է հասկանալ— քեզ հեշտությամբ չի կարելի դո՞ւարերել, կործանել, քո հանգեպ չի կարելի դաժանություն հանդես բերել և այլն (չնայած ղիմիշ բառը ունի և հակառակ իմաստը, նայած ինչ նախադասության մեջ— խնայել, խղճալ, ափսոսալ):

12-րդ տ. «Սկանդարի Զուլդարեն թողած, ջընաղ եեքալ արմանելու»:

Ջնաղ բառը թարգմանվել է «երկճյուղ (ձեռքի, բաղկի)»։ իսկ եեքալ— հուռութք, բժժանք։ Ճիշտ է, պարսկ. եեքալ (հեյքել) նշանակում է բժժանք, հուռութք, բայց այստեղ արարական եեքել բառն է, որ նշանակում է գեղաբանդակ, արձան։ Այսպիսի թարգմանություն համար կոմսն է ծառայում նաև նախորդ ջնառ բառը, որ նշանակում է անրակ⁴։ Ուստի այս

¹ Բնագործ—1 երանի. ² Բոլորք. ³ մանուշակ:

⁴ Դժվար է էնթաղել, թե ջնաղ-ը աղավաղված ջնաղ բառը եղած լինի.

երկու բառերը պետք է հասկանալ—անտիկ աշխարհից, Սկանդար Զուլպարից (Սկիթանդր Մակեդոնացուց) մնացած զեղաքանդակ—կիսանդրի:

13-րդ տոգ. «Համաշա սեյրան իս անում, վարթ ու մանիշակ քաղում իս»: Բնագրում գրված է — «Համաշա սեյր իս անում, վարթ ու մանուշակ քաղում իս»: Այստեղ ես պետք է համաձայնեմ Գ. Ասատուրի խմբագրմանը, որ սեյիր-ը գարձրել է սեյրան. երկուսն էլ համարյա նույն նշանակությունն ունեցող արաբերեն բառն է—գրոսանք, նաև գրոսարան, զվարճալիք, զվարճություն վայր, գիտել և այլ նման իմաստներով: Եթե պահպանվի բնագրի սեյր ճիշտ ձևը (մրացական արտասանությունը գրված է—սեյիր), ապա մի վանկ պակասում է և ստիպված պետք է լինել ավելացնել դուն (համաշա դուն, կամ՝ դուն համաշա սեյր իս անում), որին զիմելու հարկ չկա տվյալ գեպում: Երգչի գրած բոլոր խաղերում միայն այս և սրան հաջորդող երկու տողերն են, որ ունեն իրական հանդափություն («քաղում իս, մաղում իս, շաղմաղում իս»): Երրորդ տողի շաղմաղում իս հանդափոր բառը քիչ տեղ է թողնում ենթադրելու համար, որ այս բացատրությունը կարող է սրբու խմբագրման հետևանքով առաջացած լինել:

Ստանափորի վերջին տունը բնագրում գրված է հետևյալ ձևով.

Յար քիդանից հիրանալա միրնելիս վրա գծվար ա
Աշխիչցթ մաջարում իմ դարի ինչպես անիմ ինձի չարա
Թվելի չէ Սայաթ-Նովե քիզի ճաղառուռ նոքար ա
Նուրանից ձևարթ քաշիլըն էտ էլ շատ ա դարմանալու:

Սուսի այս տունը պետք է կարդալ հետևյալ ձևով և ոչ այնպես, ինչպես կարդացել է Գ. Ասատուրը.

Յար, քիդանից հիռանալըս միրնելուս վըրա դըմար ա.
Էշխեմես Մեջլում իմ դարի, ինչպես անիմ ինձի չարա.
Ավելի չէ Սայաթ-Նովեն—քիզի ծառա ու նոքար ա.
Նըրանից ձևոքըս քաշիլըն, էտ էլ շատ ա դարմանալու:

Այստեղ միայն կասկածելին վերջին հանգակապ տողն է, որովհետև բոլոր հանգակապ տողերը վերջանում են... ալ արմասալու հանդով, իսկ այստեղ ալ-ի փոխարեն շատ ա ձևով: Այսպիսի բացատրություն, նման ռուսափորի մեջ, չէր լինի երգչի խաղերում: Եթե ընդունում ենք, որ տողն այլ ձև չի ունեցել, ապա կասկածից վեր է, որ երգչի ձևապարում, մասավորապես, պետք է գրված լիներ այսպես—«Նըրանից ձևոքս քաշիլըն, շատ ա էտ ալ արմանալու»:

Իսող խթ.—

Էյ բեմուրազ մի սըպանի, չուսքի արիք սեր, նազանի.
Թե քիզ ավել յադ յար սիրիմ, ումըրես չանիմ խեր, նազանի:

1 Պետք է ենթադրել, որ էս ալ (այդ էլ) ձևը երգիչն իր հոր (արեմտահայ) բարբառից վերցրած կլինի:

Աշխարհումըս դուն իմ ջան իս,
Դուն իմ Շահ իս, Սուլթան, խան իս,
5 Ի՞նչ կուլի միդ մըտիկ անիս,
Հազարեն մե ջեր¹, նազանիս

Դարիր դավրիշ իմ, հաջ² չունիմ
Դիխիս էրծաթե³ թաջ⁴ չունիմ.
Սիս քիզ ավել իլաջ⁵ չունիմ.
10 Դուն դարի ինձ տեր, նազանիս

Կըրակ արվիր կրակն ավելի.
Չախմախ ունիս դուն ցավելի.
Աշխարհում քիզնից ավելի
Ո՞վ ասավ թե կեր⁶, նազանիս

15 Սայաթ-Նովեն իմ, ճար չունիմ,
Յիս վարթուն իմ մին խար⁷ չունիմ,
Թե դուն ասիր յադ յար չունիմ,
Իղրարթ զըքար, նազանիս

Ինչպես բոլոր անվերնադիր ռաանավորների համար, այստեղ ևս առաջին տողը ծառայում է որպես խորագիր, բայց զժրախաարար Գ. Ասատուրը սխալ է վերծանել այս տողը։
Բնագրում գրված է.

«Կիսամուրադ մի սպանի, չունքի արիր՝ սեր նազանիս»

Չնայած այս ուղղումը կարող է հետադաշում մի փոքր թյուրիմացությունն սակեծել, այն իմաստով, որ կընդունվի որպես մի այլ խաղ, բայց սա անհրաժեշտ է, որովհետև առդի բավանդակությունը բավականին փոխել է սխալ վերծանությունը։

3-րդ առդ. բնագրում գրված է՝ «Ախշարուն ջան իս»—Գ. Ասատուրը շատ ճիշտ ավելացրել է դուն իմ պտկասող բառերը։

4-րդ առնը Գ. Ասատուրը ճիշտ չի վերծանել. չնայած վառ ձևադրությամբ, բայց անսխալ գրված է ստորե բերվող ձևով, մանավանդ որ «ցավելի չախմախ» լինել չի կարող.

Կըրակ արվիր կրակն ավել
Չախմախ էլ ունիս դու, դավ էլ.
Աշխարհումս քիզնից ավել
Ո՞վ ասավ, թե կեր⁸, նազանիս

Սխալ է վերծանված նաև վերջին տան վերջին առդը, որով և խախտվել է հանգը. զըքար բառի փոխարեն բնագրում գրված է ևս էր, այսինքն իղրարդ (խոստումդ) այդ էր—նազանիս

1 Վրաց.—անգամ. 2 արար.—հաջի—ոչխտագնացություն, այստեղ՝ ուխտաադի.
3 բնագրում—արծաթե. 4 պարսկ.—թաջ. 5 կար (բարբառ.). 6 պարսկ.—փուշ. 7 բնագրում
կար զացվում է նաև—ասիր. 8 կար

Սաղ Ծ.—

Քարար զընաց բուլբուլի մող «վարթըն քու զալուն մընում է,
Ճռխկնիրըն բացրացըրած վերեն շուր զալուն մընում է.
Ար վուտուց զանգակի պես քաղցըր ձեն տալուն մընում է»
Բուլբուլն ասաց. «Զիմ կարող դա, պուճպուճեա լալուն մընում է»:

- 5 Վարթըն ասաց. «Իմ բուլբուլին ալ պուճպուճեն մենց կու խափե՛,
Թե խիլը ունիա, զարիւր բուլբուլ, էլ քու քաղի ճամփեն² չափես:
Քանի զուգե՞ քընած տիղըն իր՝ թշնամին կուրըն կապե,
էլի վիրչում մեղան (?) Բոստամի Զալին մընում է»:

- Վարթըն ասաց. «Սային բուլբուլ, նալաթ էտ քու էթտիրարին⁵,
10 Անցկացա՛վ ապրիլ, մայիսըն, մեկ օր Կարցըրի⁶ յարին»:
Զեթուդ թե մուրաղին հասնին, աիա, ինչ արավ քավթար զարին,
Փահրաղին քլունդըն սրպանից, Շիրին խանջալին մընում է:

- Աշխարումըն վարթըն է էլի բուլբուլն էրի սիրեկանըն:
Բուլբուլի լիզվով իմ ասում, Տե՛ր, պահե վարթի նրմանըն:
15 Աշխարումըն քանի սաղ իմ⁷, Սայաթ-նովի գերեզմանըն
Նահարասի լալի նրման շահի վեր՝ զալուն մընում է:

Այս խաղի մի այլ վարիանտը գտնվում է 'Կ. Ախվերդյանի արխիվում, նույնպես վրացերեն առուերով և կիսադրամատիվ գրված առանձին թերթիկի վրա, որը, անշուշտ, Ախվերդյանը ձեռք է բերել Երզնի ժողովածուն հրատարակելուց հետո, այլ կերպ կմացնեի ժողովածուի մեջ:

Բ. Ասատուրն այս վարիանտը համարյա անտխալ վերձանել ու հրատարակել է «Գրական թերթ»-ի 1934 թ. № 17-ում: Ծանոթագրության մեջ նա գրում է. «Ներկա վարիանտը բոլորովին նոր է և շատ է աարբերվում առաջինից»: Պետք է ասել, որպես ձեռքից ձեռք անցած վարիանտ, խաղի առաջին երեք տունը քիչ է աարբերվում Երզնի որդու գրածից, ինչ վերաբերում է չորրորդ (վերջին) տանը, ապա, բացի վերջին տողից, առաջին երեք տողը երգչի «Պատկերա զալամով քաշած» (ԼԷ) հայանի երգի վերջին տան աղավաղված վարիանտն է. Ընկ. Գ. Լեոնյանը 1931 թ. լույս տեսած «Սայաթ-նովա» ժողովածուի ծանոթագրությունների մեջ միանգամայն ճիշտ գրում է, որ Զալին և խանջալին բառերը պետք է վերջանան Զալուն և խանջալուն ձևով, ինչպես այդ պահանջում են մյուս աների... ուն ձևով վերջացող հանգերը: Այդպես էլ հենց վերջանում է Ախվերդյանի արխիվում եղած վարիանտի մեջ:

2-րդ տող. ձեռագրում գրված է.

«Ճռխկնիրն բացրացնիլ է վերն շուր զալուն քնում է».—

որը կարելի էր ձևափոխել նաև հետևյալ կերպ.

«Ճռխկնիրըն բացրացըրիլ է, վրեն շուր զալուն մընում է».

կամ՝ ճռխկնիրըն բացրացիլ է...

1 Բնագրում—կխափե. 2 այստեղ և բոլոր դեպքերում—ճանիա, ճանփեն. 3 բնագր.—
զուգի, 4 բնագր.—ուր=յուր. 5 բնագր.—էթիրարին. 6 բնագր.—մին օր չհարցրար. 7 բնագր.—
սաղ իս. 8 բնագր.—վրեն:

8-րդ տ.— բնագրում տողը դրված է այնպես, ինչպես արտագրել է Գ. Ասատուրը։ Նրան և հետագայում ընկ. Գ. Լևոնյանին շփոթութեան մեջ է գցել մեղան բառը, որ Ասատուրը համարում է անընթեռնելի, իսկ Լեւոնյանը — տողի առաջին կեսի հետ՝ անորոշ։

Առանձին դժվարությամբ չի եղել այս տողը վերծանելու և երկու վանկը լրացնելու համար։ Պարզապես ձեռագիրը կազմողը չէր կարող Վիրջուս և սեղան բառերից հետո գնել ք, վրացերենում չլինելու պատճառով։ իսկ նախորդ տողն ինքնին բացատրում է, որ մեղան-ը պետք է լինի և պետք է կարդացվի մեղանը¹։ Ուստի այս տողը պետք է կարդանք հետևյալ ձևով.

«Քանի գուգե քընած տիղըն իր թշնամին կուռըն կապե,
էլի վիրջումըն մեյդանը Խոստումի Զալուն մընում է»։

Վարիանտի մեջ երկրորդ տողը հենց այդպես է. իսկ առաջինը՝ իմաստով նույնը լինելով, բառերով շատ տարբեր է՝

«Հաղար գուգե դայրաթ անե սխալտա գիմն կուր ու կապե»...

Այս տողի առաջին մասը հարազատ չէ երգչին, իսկ երկրորդ մասը՝ սխալտա դիվը (սպիտակ գե) հավանաբար երգչինը լինի, սովաչն, որդու ձևաքով խմբագրման է ենթարկվել և դարձել՝ իր թշնամին։

12-րդ տողի մեջ մի վանկ ավելի է, և այդ նրանից է, որ Գ. Ասատուրը բնագրի փոխելով բառը դարձրել է փոխելով։ Տողի այս առաջին կեսը վարիանտում դրված է՝ «Փախրաղըն իրան սրտանից»... կասկածից վեր է, որ փոխելով ավելի հարազատ է, քան թե իրան բառը, որովհետև տողի մյուս կեսում ասում է՝ Շիրինն էլ մնում է խանգալին — դաշույնին։

Վերջին տան առաջին տողի բուլբուլն էրի բառը բնագրում դրված է շատ պարզ և անբաժան՝ բուլբուլները։

Անցնենք խաղի վերջին երկու տողին, մանավանդ վերջինին, այս անգամ չանդրադառնալով սրանից բխող ծանոթագրությանը, որ մի անմեկնելի ուղիղությամբ լեզվով թողել է Օհանը խաղի վերջում։

Ահա, շատ վեճերի առիթ ստեղծող, այդ երկու տողը.

«Աշխարումըս քանի սաղ իս, Սայաթ-Նովի գերեզմանըն,
Շահ-Արասի լալի նըման Կահի վրեն դալուն մընում է»։

Ինչպես քիչ առաջ նկատեցինք, բնագրի սող իս-ը Գ. Ասատուրը սխալմամբ կարդացել, կամ գրել է սաղ իս, և այս, մինչև այժմ անկասկածելի մնացած մի հատիկ մ տալով քիչ քան չի պղտորել այս տողերի միտքը դեթ մոտավոր չափով հասկանալու գործում։

Այս տողերը հասկանալուն ավելի մեծ չափով խանգարել է դավեշտի հասնող նաև մի այլ սխալ. այն, որ 2-րդ, վերջին տողի լալի բառը հասկացվել է անգին քար, սուտակ (լալ)։ Այդպես էլ թարգմանվել է ուսերեն.

¹ Արաբ.—հրապարակ, ասպարեզ։

Доколе я жив, могила твоя, о Саят-Нова,
Как шаха лал Шах-Абасса дотолѣ тебя ожидает.—*)

Միայն վերջին տարիներս պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, երգչի հայերեն խոսքերի վրացերեն թարգմանութեան ժամանակ, երևի զգալով, որ ոչ Շահր կարող է անգին քարի վեր գալուն, կամ վրեն գալուն սպասել և ոչ հակառակը, այս բառը թարգմանել է վայնասուն, ողբ բառով (հայերեն լալ—լալ լինել բառից)։ Սակայն, զգալով, որ Սալար-Նոփան ղեւեւ գերեզման չէր կարող ունենալ, սրովհետեւ տողի սկզբում ասված է «քանի սաղ լալ» (փոխանակ սաղ լալ), ուստի նա հայերեն առաջին տողի գերեզման բառը թարգմանել է մարմին բառով, բայց և այնպես 3-րդ տողի առաջին մասից ստացվել է մի անկապ բան։ Ահա այդ երկու տողերի բառացի ետ-թարգմանութեանը.

«Քանի որ աշխարհում կենդանի եմ, Սալար-Նոփայի մարմինը,

Շահ Աբասի վայնասունով (ողբով) շահի գալուն է սպասում»²).

Մինչդեռ լալ-ը ալատեղ պարսկերեն լալ բառն է, որ նշանակում է սենեկապետ, ներքինի ծառայող, նաև գաւաթարակ=երեսաների վերակացու (մենտոր)։ Իրանի այդ նշանավոր միապետի և զորավարի շուրջը, նույնիսկ նրա կենդանութեան ժամանակ (մեռած 1628 թ.), ահագին վրապական պատումներ էին հյուսվել։ Սալար-Նոփայի ժամանակ Շահ-Աբասի մահվանից անցել էր ավելի քան մի հարյուրամյակ և, բայց երեսիցին, երգիչն այս պատկերի մեջ նկատի ունի Շահի վրապական կենսագրութեանից մի մոմենտ՝ նրա և իր սենեկապետի կամ գաւաթարակի շատ մտերմական հարաբերութեան մասին։ Գուցե Շահր հաճախ այցելել է իր սիրելի սպասավորի կամ բարեկամի գերեզմանին, կամ հենց նրան՝ կենդանութեան ժամանակ (գուցե և հակառակը)։ Ահա այս մոմենտը նկատի ունի երգիչը, երբ ասում է իր սիրածին քանի դու կենդանի ես, Սալար-Նոփայի գերեզմանը կամ Ս—ն, իր գերեզմանում, քեզ կապասի այնպես, ինչպես Շահ-Աբասի լելին, կամ լելի գերեզմանը՝ Շահի այցելութեանը։

Խաղ ՆՄԱ.—

Փահրադըն մերած, Եթին ասաց՝ դարեն Լրված իմ.

Կաշիր է վարթըն, մող չէ՝ թողնում, չալարեն Լրված իմ,

Բուրբուրն ասաց՝ «վարթիս խաթրի խաթեն Լրված իմ»:

Տասնումեկ՝ ամիս մուշամ կացի, տարեն Լրված իմ.

5 Աստուած կու սիրիս, դար մի հաքնի³, դարեն Լրված իմ.

Մեջումի նրման ման իմ գալի⁴, յարեն Լրված իմ:

*) Саят-Нова, Песни, Москва 1939, էջ 68. զորի ծանոթագրութեաններում ԼԱԸ բառը թարգմանված է рубин, իսկ Շահ-Աբասի մասին սխալմամբ գրված է. «Шах-Аббас (1642—1667)—крупнейший из иранских шахов династии сефевидов. Այս բացատրութեանը և երգչի հիշած տողը վերաբերում են Շահ-Աբաս I-ին (1587—1628), իսկ բերված թվերը՝ Շահ-Աբաս II-ին, որը գահ բարձրացավ Շահ-Աբասի թոռ Շահ-Սեֆիից հետո:

**) «Հայերեն խոսքերը վրացերեն» [թարգմանութեամբ], Թբիլիսի, 1935, էջ 100:

1 Բնագրում— Կ 2 աստու միև. 3 բացի 3-րդ տեղից—մի հալեն, 4 գալիս (բոլոր տներում):

Ջրկա Փաշահի խաղինումըն մալ քիզի լայիդ.

Հալա չեն¹ դործի թիրմանումըն շալ քիզի լայիդ.

Օսկե² մատնումըթ գուն դըրիլ իս լալ քիզի լայիդ:

- 10 Հաքիլ իս առլաս, ունդն է գուլղազ ալ քիզի լայիդ:
Աստուած³ եռ սիրիս, դար մի հաքնի, դարեն էրված իմ,
Մեջլումի⁴ նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

Խոսկիրըթ քախցըր, լիզութ շաքար շարթի միշումըն,

Գարունքվան ծաղիկ, բաց իս էլի մարաի միշումըն.

- 15 Մաղիրըթ բեհան, փաթըթած է վարթի միշումըն.
Կանաչ տերեւեն նամ չի կաթի վարքի միշումըն.
Աստուած կու սիրիս, դար մի հաքնի, դարեն էրված իմ,
[Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:]

Սալաթ⁵-նովեն իմ, էնդուր կուլամ⁶, դարդիրս արբար.

- 20 Մաղիրըթ բեհան, կլապխոն է⁸, հուսիրըթ շարբար,
Բարակ սուրաքլիթ խիստ սազ գուրա գիրս ու զարբար.
Աստուած կու սիրիս, դար մի հաքնի, դարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

2-րդ տող. «Բաշվիլ է վարթըն՝ մող չի թողնում, չափարեն էրված իմ»:

Այս տողում մի վանկ ավելի է (երկրորդ մասում) և պարզ է, որ չափարեն բառից էլ էնի. Գ. Լեոնյանը խաղի ծանոթագրություն մեջ գրում է. «մեր բնագծած բառին՝ «չափարեն» պետք է փոխարինել մի ուրիշ՝ երկվանկանի բառ. որինակ՝ «չարեն»... (էջ 173): Բայց արեն անորոշ բառը չի համապատասխանի տողի իմաստին, այլ՝ վարդի խարր (փուշը), որը մոտ չի թողնում: «Բաշվիլ է վարթըն» բառերը պետք է հասկանալ ներքաշված և փշերով պաշտպանված, ուստի հնարավոր չէ քաղել, այդ պատճառով էլ վարդը քաղելու ցանկություն ունեցողը խարեն վառված է. պարզ է, որ չափարեն բառը պետք է դարձնել խարեն; որին կոման է ծառայում նաև խարեն բառի բացակայությունը երկի մեջ: Ինչ վերաբերում է հաջորդ՝ 3-րդ տողում տպագրված խարեն բառին, ապա բնագրում այդ բառը պարզ գրված է քարեն, որը միանգամայն ճիշտ բացատրում է բլրուլի գանդառը, այսինքն՝ վարդին մոտենալու պատճառով (որի միակ սիրահարը ինքն է), նրան քար են նետում, և այդ քարից էլ նա վառված է:

4-րդ տող. «Տասնումեկ ամիս մուջամ կացի, տարեն էրված իմ»:

Մուջամ բառը չի թարգմանված, որովհետև այդպիսի բառ գոյություն չունի: Ձեռագրում այս բառը կարդացվում է մուջիմ. «Տասնումին ամիս մուջիմ կացի, տարեն էրված իմ» — կացի (կացել, մնացել) և տարի բառերը ես իրենց հերթին կասկած չեն թողնում, որ այստեղ սխալմամբ Ա-ս չգրված մունջ իմ (լուս կմ) բառն է *):

¹ Բնագրում — չեն. - ոսկե. ² բուրբ տներում — առջված. ³ Սալուս. ⁴ բուրբ տներում — կոսիլիս. ⁵ միայն այս խաղում — Սեյար. ⁶ գուլամ. ⁸ էն:

*) Եթե մուջամ բառ լիներ, պետք է գրվեր կացա և ոչ թե կացի:

9-րդ տողի դուռն բառը չկա բնագրում, և Գ. Ասատուրը շատ ճիշտ լրացրել է:

10-րդ տող. «Հաքիլ իս ասլաս, ոանգն է զուլղաղ ալ քիզի լայիզ»^{*} Բնագրում գրված է—«Հաքիլ իս ասլաս բանգ զուլղաղ ալ քիզի լայիզ», որը պետք է ուղղել հետևյալ ձևով. «Հաքիլ իս ասլաս, ոանգը զուլղաղ— ալ՝ քիզի լայիզ»:

16-րդ տող. «Կանաչ տերեւն նամ չի կաթի վարքի միշումըն»^{*} Վարքի բառը բնագրում պարզ գրված է զարքի (դարդարանքի): «Վալ թի» չէր լինի, որովհետև նախորդ տողում այդ բառը կա: Փոքր կասկած է մնում չի կաթի (չի կաթում) բառի համար, որովհետև բնագրի չի կաթի-ն կարելի է կարգալ և չը կաթի (չնայած թիֆլիսահայ բարբառում սովորաբար լինում է չը կաթի), որը, կարծես, ավելի պիտի համապատասխանի նախորդ տողին՝ մաղերդ փաթաթած է վարդի մեջ (որպեսզի) կանաչ տերեւից ցող չկաթի զարդի մեջ: Այս դեպքում 15-րդ տողի վերջում պետք է գրվի բուլի:

20-րդ տող. «Մազիբըթ ընհան, կլապիտոն է, հուսիբըթ շարրար»^{*} որ-քան էլ կլապիտոն բառն աշխատենք առանց ը-ի կարգալ՝ մի վանկ ավելի է հնչում: Ընկ. Լեոնյանը միանգամայն ճիշտ առաջարկել էր (էջ 174) տողի երկրորդ տառից դուրս գցել Է-ն և իրոք բնագրում չկա այդ Է-ն:

22-րդ տող. «Բարակ սուրաթիթ խիստ սաղ զու քա զիրա ու զարրար»^{*} Բնագրում գրված է «բարակ դամարիտ» և այլն: Ղամար բառն արար-նշանակում է իրան, հասակ, որ և միանգամայն համապատասխանում է տողի երկրորդ մասին:

Այս խաղի վերջին տունը հինգ տողից է, մինչդեռ պետք է վեց տողից լիներ, ինչպես նախորդ բոլոր տները, որովհետև սա երկչի հայերեն միակ մուսադղասն է (տունը— 6 տողից), բայց երկչի որդին, ծանոթության մեջ, սխալմամբ գրել է մուսադաղ, որը մի այլ ձև է սուանավորի^{*}): Քաղ ԾԲ.—

Այբըն Աստուած սիրիս, բեն բարի կացի,
Գիմ գազարիք արա դա ու այբ թու
Էլ Լրանի չըկա դա զալում մարթուն.
Ընլ էրեսիթ զի թու ու այբ թու

6 Ժե ժամանակ հասավ աչկերիս լալու,
Ին ինձի զըղեցիր դարդըս վուխալալու.
Լյուն լալով իմ էս աշխարհիս մնալու,
Էնդուր մախ քաշեցի խե ու այբ թու

Ծա ծովումն Ժրնաց, դուս չեկավ նավըթ,
10 Կեն կամով ավելցրիք քու սրտի ցավըթ.
Հո համան կանչում իս ձա ձայնով դավըթ.
Ղաթ դարուլ կաց ճարիս...

Բե բուն ցո ցամքիլ է, հյուն հունար ունե,
Փյուր փակեցին դուրըն, քե շըքար ունե,
15 Եվ օ ֆեն կարթալու Աստուած ճար ունե,
Հալալ Սայաթ-սովեմ կեն ու այբ թու

^{*} Երգչի հայերեն խաղերի մեջ սա միակն է, որի տողերն ունեն 14 վանկ—5—4— (այս տաղաչափությունն ունի և վրացերեն մի խաղը):

Սա երգչի միակ օլիֆլամա-դարաեֆա հայերեն խաղն է, որի նախափերձին երկու տունը պակասում է ձեռագրում: Ինչպես նկատելի է մեր ընդգծած բառերից, Գ. Ասատուրի այս վերծանությունն ունի բավականին մանր թերություններ: Իհարկե, առաջին հայացքից ճիշտ է թվում նրա կատարած այն ուղղումը, երբ ընագրի այբվի-ը կամ այիբ-ը դարձել է այո, բայց դրանով խախտվել են այդ առղերի ուղերը—պակասել վանկերը: Եվ որովհետև այս աիպի աշուղական խաղերը պահանջում են և ուրույն գրելու ձև, ուստի բերում ենք ամբողջությամբ նաև մեր վերծանությունն այնպես, ինչպես գրված է այն ընագրում, որով միաժամանակ կհեշտացնի մեր կողմից արվող մեկնությունների և անհրաժեշտ ուղղումների գործը:

Կետագրությունից բացի, ընագրի համեմատությամբ, մենք կատարել ենք միայն մի փոքր սրբագրություն, այն է՝ գիմորոշ դ հոդի փոխարեն գրված ը տառը դարձրել ենք տ, ինչպես, առանց բացառության, այդ պահում ենք երգչի ձեռագիր գավթարում:

ԱՅԻԲ.—Աստված սիրիս, ԵՍՍ—բարի կացի,

ԳԻՄ—դագաթըտ արա դա ու ալիբ քո: (դաթ)

ԵՁ.—երանի չըկա ԶԱ—զալում մարթուն,

ԷԲԹ—էրեսիտ գի քո ու ալիբ քո: (թաթ)

5 ԺՆ—ժամանակ հասավ աչկերիս լալու.

ԻՆ—ինձի գրցեցիր դարգըս փոխալալու.

ԼՅՈՒՆ—լալով իմ էս աշխարիս մնալու,

ԷՆԳՈՐ փախ քաշեցի իս ու ալիբ քո: (խաթ)

ՍԱ—Տոլումըն մընաց, դուրս չեկավ նավըտ.

10 ԿԵՆ—կամով ավելցրար քու սըրտի ցավըտ՝

ՀՈ—համան կանչում իս ԶԱ—ձայնով դավըտ,

ՂԱԹ—ղարուլ կաց ճարիս եե ու ալիբ ցո (?) (հաց ?)

ԲԵ—բուն ՅՈ—ցամքիլ է, ՀՅՈՒՆ—հունար ունի,

ՓՅՈՒՄ—փակեցին դուռըն ԲԵ—չըքար ունի,

15 ԵՎ Օ ՖԵՆ կարթալու Աստված ճար ունի,

Հալալ՝ Սայաթ-Նովուն կեև ու ալիբ քո: (կաթ)

Ի դեպ, պետք է նշել, որ Գ. Ասատուրը հրապարակ հանելով այս խաղերը, «Աղագրական հանդես»-ում չի տվել ոչ խրթին տողերի մեկնությունը և ոչ էլ օտար ու զմար հասկանալի բառերի թարգմանությունը: Նույնը պետք է ասել նաև 1914 թ. Հայ Գրողն. Կովկ. Լճի, հրատարակած ժողովածուի մասին, որտեղ լրիվ և անփոփոխ դետեղված են այս 8 խաղերը ևս Միայն ընկ. Գ. Լևոնյանը, իր կազմած «Սայաթ-Նովա» հայերեն խաղերի լիակատար ժողովածուի մեջ (1931 թ.) ուղղորդություն է հատկացրել այս խնդրին և փորձել է որոշ չափով վերացնել թույս բացը: Օրինակ՝ այս խաղի ծանոթագրության մեջ նա բերում է հինգ հանդակապ

*) Պակասում է երկու տուն—Մ տառից մինչև Տ (12 տառ). երկու հանդակապ տողերի վերջում հավանաբար եղել են վար և մար հանգափոր բառերը:

տողերը (էջ 174) և բաց անամ գրերի անունների մեջ ծածկված հանգա-
վոր բառերը (դաթ, թաթ, խաթ, ճաթ, կաթ), որոնց թարգմանութեանը
տալիս է մոդովածուի բառարանում, բայց ծանոթագրութեան մեջ չի առաջարկ
խաղի և ոչ մի բարդ տողի մեկնութեանը: Ինքնին հասկանալի են կար և
սալ բառերը, իսկ մնացած երեքից միայն խաթ-ի թարգմանութեան հետ
պետք է համաձայնել (խաթա բառից), մինչդեռ դար ու քար բառերի
թարգմանութեանը ոչ մի կերպ չի արդարացում ամբողջ խաղի և մա-
նավանդ այս տողերի բովանդակութեամբ:

Օրինակ, մեզ հայտնի չէ, թե ընկ. Լեոնյանը 2-րդ տողի դաթ-ը
որ լեզվից կամ բարբառից է վերցրել և թարգմանել բարձր բառով: Ի՞նչ
կատարելի է բազմաթիվ արա բարձր բառերից. եթե ընդունենք — գլուխդ
բարձր պահիր — այդ դեպքում չի համապատասխանի ամբողջ խաղում շեշտ-
ված բարոյախոսութեանը, որից երևում է, որ մարդ պետք է իր գլուխը
(զագագիլը) ցած պահի և ոչ բարձր, այսինքն՝ համեստ լինի և ոչ հպարտ:
Միամամանակ պետք է առաջարկվեր, որպեսզի վաղալուր բառը դրվեր
գաղափար, որովհետև՝ գաղափար արա բարձր՝ ձեր լինի:

Եթե սա պարսկական դադ բառը չէ, որ նշանակում է արդարութեան
(մի այլ իմաստով և օգնութեան, փրկութեան կանչ), ըստ որի կարելի է
հասկանալ գլխիդ արդարութեան բեր, կամ գլխիդ վայ տուր — օգնութեան
հայցիր, ապա ավելի հավանականն այն է, որ ընդունենք երևանի բար-
բառում եղած դանքել (դաքել) բառը, որ առում են նստած մարդու վայր-
կենական ննջելուն: Երևանում ասվում է նաև «գլուխդ դաթիր՝ ջուր լըց-
նեմ» *): Դալել բառը միանգամայն համապատասխանում է տողի և խաղի
իմաստին, միայն գաղափար բառը պետք է դարձնել գաղափար (բնագրի
ընդ դրված է ք-ի փոխարեն), ինչպես մենք ուղղել ենք վերծանութեան
մեջ: 4-րդ տողի քար բառը պետք է հասկանալ քար — ձեռք և ոչ թուրք. դադ
(տատ) — բաղաձայնուն, ինչպես այդ (երեկ սողից — տեքստից անջատ)
թարգմանել է ընկ. Լեոնյանը: Մաստի Լրեսիտ դի քար-ը պետք է հասկա-
նալ — երեսդ ծածկիր ձեռքով (ամոթի, ամաչելու նշան):

8-րդ տող. «Էնդուր վախ քաշեցի խաթ» — նշանակում է՝ այդ պաաճա-
ռով վախ քաշեցի — խուսափեցի, վախեցա սխալից, փորձանքից (հանդի հա-
մար խաթա բառի բռնադրուսից կրճատումը):

11-րդ տող. «Հո-համան **») կանչում իս Զու-ձայնով դալլա տ», ընդգրծ-
ված վերջին բառը պետք է ենթադրել պարսկ. դամա (դեմա), որ նշանա-
կում է դեղ, դարման, քան թե նույն պարսկ. դալլա (դատ, դատաստան)
բառը, որովհետև նախորդ տողում խոսվում է «սրտի ցողի» մասին:

12-րդ տող. «Վարուկ կաց ճարիս հուլ» (?). բնագրում հենց այսպես էլ
գրված է — հե ու ալիք գո: Կասկածի ո վեր է, որ երգչի որդին ոտանավորի
նախ բառը դարձրել է հայերեն հասկանալի հուլ-ը և խախտել ալիքի ամայի
այբուրենական շարքը: Կ. Ստատուրին չէր հաջողվել այս բառը վերծանել,
և ընկ. Լեոնյանը մոդովածուի մեջ շատ ճիշտ դարձրել է նախ, ելնելով
հայկական այբուրենի տառերի հաջորդականությունից: Մաստի տողը հե-

*) Այս փաստը մեզ հայտնեց ընկ. Գ. Փասպարյանը (Արմֆանի Գրականության
և Լեզվի ինստիտուտի Լեզվի տեղափոխ գիտ. աշխատակից):

**) Պարսկ. — միշտ, անընդհատ:

աւայտ իմաստն ունի. համաձայնիւ, թե գանես ճաթ (կորեկի կամ կոխա-
աացորենի հաց), այսինքն՝ համեստ եղիր պահանջներիդ մեջ:

Հատուկ նպատակով առանձին բերում ենք խաղի, մինչև այժմ բոլո-
րովին անուշադրութեան մատնված, վերջին տունը: Հայասի է, որ Սայաթ-
Նովայի գրադիտութեան աստիճանի վերաբերյալ շատ խոսակցութեաններ
ու կասկածներ են եղել: Նույնիսկ եղել են մարդիկ, որ կասկածել են երգչի
ոչ միայն հայերեն, այլև ընդհանրապես գրել-կարդալ իմանալու մասին:
Այժմ էլ կան մարդիկ, որոնք նրան ինքնու-կիսագրագետ լինելուց այն
կողմը վախենում են տանել: Մեզ համար միանգամայն պարզված է այդ
հարցը, այսինքն նրա գրադիտութեան աստիճանը, իսկ թե որտեղ է սովո-
րել, քանի՞ տարի, այդ է միայն, որ մնում է մոխի: Մենք համոզված ենք,
որ նշանավոր բանաստեղծ-աշուղը տիրապետել է հայերեն, վրացերեն,
ադրբեջաներեն (և թյուրքերեն), ապա նաև պարսկերեն լեզուներին, որը,
սակայն, եղակի երևույթ չէր այն դարերում, բայց եղակի էր այն, որ նա
այդ բոլոր լեզուներով էլ իմացել է գրել-կարդալը: Համոզված ենք նաև,
որ Սայաթ-Նովան թիֆլիսահայ բարբառով գրել է ոչ թե հարկադրված,
որովհետև նա միայն այդ բարբառն է իմացել, այլ՝ նպատակով: Նա չէր
զժվարանա գրել նաև գրարարախառն հայերենով, նա գիտեր և այլ բար-
բառներ, բայց մեզ այստեղ այդ հարցը չէ, որ գրադիտում է: Միայն
սգտվում ենք այս, արտաքուստ սոսկ անիմաստ բառախաղ թվացող, չորս
տողի քննութեանից, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող տեսնի, որ պարզ
ծածկագրով արտահայտած այս հետաքրքիր սրամտութեանները կարող էր
անել ոչ միայն սուր մտքի տեր մի երգիչ, այլև, անկասկած, իր դարին
համապատասխան, բավականին գրագետ մի անձնավորություն:

Ըն — բուն ցո — ցամքիլ է, Էյուն — հունար ունի,

Փյուր — փակեցին դուռն, Բն — շքար ունի,

Եվ — Օ — փե-ն կարթալու Աստված ճար ունի,

Հալալ Սայաթ-Նովուն Էեն ու ալիք քս (կաթ)

Մենք տեսանք, որ այբուբենի տառերը հաջորդարար հիշվում են խա-
ղի մեջ և ամեն առաին համապատասխան մի բառ է սկսվում (բացառու-
թյամբ տեքստում պակասող երկու տան մեջ 12 տառերի): Հեղինակն այ-
բուբենը հասցնում է փափուկ և տառին և հաջորդ ց տառով գրվող մի
բառով (պամքիլ է) հասկացնում է, որ Ըն-ով հայերեն ոչ մի բառ չի
գտնում գրելու: Անշուշտ նա իմացել է մեր լեզվում, առնվազն, բնական
բարբառ բառերի գոյութեան մասին, բայց գրանք ևս հայերեն չէն, այ-
սինքն փոխառյալ հայերեն բառեր են, սուտի գրում է — Բն — բն ցո-ցամ-
քիլ է: Ինտերի Բն-բուն մենք կարգում ենք Բն-բն, անկախ նրանից,
թե գրի առնող Օհան Սեյադովը բուն բառի ու-ն Բ-ի փոխարեն է գրել,
թե չհասկանալով իմաստը, ենթադրել է այլ բառ: Տողի երկրորդ մասում
գալիս է Էյուն (վուն), որով նույնպես բառ չի սկսվում, բայց «հունար
ունի», այսինքն, չնայած այդ առանձին տառանշանով ևս բառ չի սկս-
վում, սակայն ու ձայնավորի հավասար կեսն է և մյուս ձայնավորների
հետ կազմում է երկրարբաններ, ուստի հունարով բառ է: Փյուր (փ) և Բն
(բ) տառերով փակվում է մեարողյան այբուբենը և երկրորդ տողում եր-
գիչը գրում է՝ «Բյուր — փակեցին դուռն» (այբուբենի) և Բն-նով, որով

քար բառն է սկսվում, այդ դուռը քարով ամրացրի՝ նինգ-պնդան գրին։ Այստեղից հասկանալի է, որ բնագրի քեշը քար-ը պետք է դարձնել «էն-նը քար ունի», որովհետեւ շըլար բառը կարող է գրվել միայն շ տառից հետո (անկասկած, շ-ն սխալմամբ գրված է ն-ի փոխարեն)։ Մնում են այրուքների վերջին երեք տառերը (և, (), ֆ), որոնցով հայերեն բառ չի սկսվում, այլ կերպ Մեսրոպ Մաշտոցն այդ տառերը ևս կհորիներ։ Ինքը, Սալար-Նովան, փ-ով սկսվող բոլոր օտար բառերը (արար, պարսկ., ագրբեջ.) գրում է փ-ով, անշուշտ, տուրք տալով թիֆլիսահայ բարբառին, որի մեջ, Ղարաբաղինի պես, չկա ֆ հնչյունը։ Եւ այդ հեղինակը () տառը շատ է գործածում իր ձեռագրում։ Հապա ինչու այս տառը միայնում է և-ին և ֆ-ին ու հայտարարում, որ «և () ֆ-ն կարթալու Աստված հար ունի»։ Չէ՞ որ 12—13-րդ դարերից սկսած () նշանը մտել էր մեր գրականության մեջ և աստիճանաբար դուրս էր վանում նաև մեր հին երկրաբառ աւ-ը երգիչը շատ լավ գիտեր այդ մասին և գիտեր () տառի պատմությունը, որը դժվար թե իմանար «ինքնուս ջուհակ» Արուսիկին...

Կարծում ենք՝ քիչ բան չի ասում նույնիսկ այս միակ «փոքրիկ» փաստը. ուստի իրավունք ունենք խաղի վերջին տողը հասկանալու ոչ այնպես, թե՛ հալալ Սալար-Նովին կաթ (է պետք), Սալար-Նովին հալալ կաթ է պետք, կամ Սալար-Նովին հալալ կաթ է կերել, այլ կաթը (կերած) հալալ լինի Սալար-Նովին, ինչպես ինքն է վերջում գնահատել իրեն, հասկացել իր «հունարն» ու արժանիքը։

Մինչդեռ բնկ. Գ. Լեոնյանը «Սալար-Նովա» ժողովածուի ծանոթագրություններում խոսելով այս և հաջորդ երկու խաղերի մասին, գրում է.

«Այսպիսի խաղերն աշուղական գրական ձևերի մեջ կոչվում են ալիֆլամա, այսինքն այրբենական, որովհետեւ տողերը, կամ տողամեջ երկու տառ (ինչպես այստեղ է), իրենց սկզբում հերթով կրում են ամբողջ այրուքները... Անշուշտ, այս և նման սպորտային խաղերի մեջ չպետք է արվեստ կամ խոր մտքեր որոնել» (էջ 174)։

Ճիշտ է, երբ ընկ. Լեոնյանն ասում է՝ «նման սպորտային խաղերի մեջ չպետք է արվեստ որոնել», սակայն ճիշտ չէ, անխտիր, բոլոր հեղինակների նկատմամբ, մանավանդ որ նա իրավացիորեն այդ սպորտային խաղերի շարքն է դասում նաև թեջնիսները (բառախաղով գրված ոտանավոր)։ Սակայն Սալար-Նովայից մեր ձեռքը հասած միայն երկու հայերեն թեջնիսները («Ես կանչում եմ Լալանին» (ԽԵ), «Այրբիմբն կարթաղիլ իմ» (ԾԳ)) և ագրբեջաներեն գրած շատ թեջնիսների մի զգալի մասը. հակառակն են ապացուցում, և հենց այստեղ ևս դուստրվում է նաև բանաստեղծական տաղանդը։ Իսկ այն հայտարարությունը, թե այդ սպորտային ձև ունեցող ստեղծագործությունների մեջ չպետք է նաև խոր մտքեր որոնել — դա ճիշտ չէ, ոչ միայն մեր երգչի, այլև նույնիսկ մի քանի ուրիշ աշուղների վերաբերյալ։

Անցնենք վերջին երկու խաղերին.

Խաղ ԾԳ. — («Այրբիմբն կարթաղիլ իմ դասեղաս»)։

Այս խաղը մեր ձեռքը հասած հայերեն երկրորդ թեջնիսն է, որը նախորդ և հաջորդ խաղերի պես համարյա թե անուշադրության է մատնվել, որովհետեւ բովանդակութունը լրիվ չի հասկացվել և գիտվել է որպես սովորական թեջնիս։ Մինչդեռ ամեն կողմից հետաքրքրական այս խաղն ար-

ժանի է կրկնակի ուշադրութեամբ, մանավանդ երգչի կենսագրական առեղծ-վածի կապակցութեամբ: Այստեղ բերում ենք այն ամենը, ինչ որ ընկ-ր. Լեոնյանը գրել է սրա մասին:

«Այս խաղն էլ վերևի խաղի նման գրչի սպորտ է: Այս ձևը կոչվում է թեջնիս. աշուղներն իրենց խաղերի տունների տողավերջում դնում էին նույն բառը տարբեր նշանակութեամբ: Պետք է ասել, որ մեր երգչին այնքան էլ չի հաջողվել այդ փորձը: Ուրիշ աշուղներ ավելի լավ թեջնիսներ ունեն:»

3-րդ տան բ. տողի «նըզավ» բառը մեզ անծանոթ է (գուցե նընգավ), երգը գրի առնող Գ. Ասատուրն այդ մասին ոչինչ չունի:

Վերջին տան դ. տողը՝

Դուն մահի հիտ, մահը քիզի հասաւ է—

լավ էր ուղղել.—

«Դուն մահի հիտ, մահը քեզ հետ հասաւ է» (էջ 174):

Ահա այն ամենը, ինչ գրել է ընկ. Գ. Լեոնյանն այս թեջնիսի մասին: Ուշագրավ է մանավանդ նրա եղբակացութեանը, թե՛ «մեր երգչին այնքան էլ չի հաջողվել այդ փորձը»:

Այժմ տեսնենք, թե որքանո՞վ է մեր երգչին հաջողվել թեջնիսով գրելը, որի համար կրեբենք ամբողջ խաղը և վերջում, տող առ տող վեր կուժենք այն:

1. Այիրբիմըն կարՍացիլ բո դասեղաս,
2. Հասա բաե, հասա ջե, հասա սե,
3. Անգըրծակի մե ձեն էկավ դասեղաս,
4. Անդաճ կալա, չիմացա, ինչ հասաւ է:
5. Հաղար տարին մարթու աչկին՝ թաքավուր,
6. Դանի տընաղ, քանի հարուստ, թաքավուր
7. Զի հարցընի տխկատ, հարուստ, թաքավուր՝
8. Մահն վուր կա, առանց կաշուք հասաւ է:
9. Բառնացավ, թթվեցավ, կինքըս ծովացավ:
10. Ախ քաշեկեն սիրտըս ընդավ ծովացավ:
11. Դաթեկով, կաթեկով դարդըս ծովացավ՝
12. Մե մարթ չըկա, վուր ինձ խրրատ, հասասե:
13. Հաղար տարին մարթու աչկին քարասուն.
14. Ո՞վ է մնացի աշխարհումըն քարասուն,
15. Սայաթ-նովա, տարիտ էլավ քարասուն,
16. Դուն մահի հիզ, մահը քիզի հասաւ է:

Դ. Ասատուրի վերծանութեան մեջ տեղ են գտել մի քանի սխալներ, որոնք անփոփոխ անցել են ըստ հրատարակութեաններին: Մենք այստեղ բերել ենք ուղղված տեքստը:

8-րդ տողում տպագրվել է «առանց կըշիտ», իսկ բնագրում գրված է՝ «առանց կըշաո»:

9-րդ տողում տպագրվել է՝ «գառնացավ ավելցավ», բնագրում՝ «գառնացավ քիվեցավ»: Վերջին տողում տպագրվել է՝ «մահ քիզի հիզ» բնագրում՝ մահ (բ) քիզի, որը պետք է դարձնել ոչ թե քիզից, այլ քիզ քիզ:

Առաջին տողի առաջին բառը բնագրում գրված է աիբիմ, որ պետք է հասկանալ այբուբենը և գրել աիբիբ մե և ոչ այնպես, ինչպես թարգմանել է ընկ. Լեոնյանը բառարանում—այբ գրի մեջ»:

Անցնենք տողերի թարգմանությունը և թե՞նիստ բայ անելուն:

Տող 1. Այրուրենը կարգացել եմ դաս դաս — դասերով:

2. (Տես վերջում):

3. Անսպասելի կերպով մի ձայն եկավ հերթով, կարգով, իրար հաջորդելով (դասողաս),

4. Ականջ դրեցի, բայց չիմացա ինչ օգնություն կանչ է, ձայն է (հա—հարայ, սա—ձայն):

5. Անցած հազար տարին մարդու աչքին թվում է մի հաաիկ օր (թաք ավուր):

6. Քանի տնանե, քանի հարուստ, թե որ գա (թա գա վուր),

7. Ձի հարցնի աղքատ, հարուստ, թաղավոր,

8. Որովհետև մահը որ կա՝ անկաշառ հասաս-պահակ է (—անխափ կտանի բոլոր մահկանացուներին):

9. Գյանքս դառնացավ, թթվեց և դովացավ (սառեց):

10. Ախ քաշելով սիրտս ընկավ ծով ցավի մեջ:

11. Դարդս կաթիլ կաթիլ շատացավ—ծով դարձավ (ծովացավ),

12. Եվ մի մարդ չկա, որ ինձ խրատ տա, խելք սովորեցնի՝ հասաս (էս—հէս (—արար.—թուրք—խելք, միտք):

13. Հազար տարին մարդու աչքին թվում է մի հուշարձան—մոնում-մենա (քարե սյուն),

14. Բայց ով է աշխարհում մնացել քարի նման հաստատ և միաժամանակ ասուն—խոսուն:

15. Սալար-Նովա, քո քառասուն տարին լրացավ,

16. Եվ արդեն դու մահի հետ ես (կամ մահի ետևից ես), իսկ մահն էլ քո ետևից քիչ է մնում հասնի (հաս հասե, հաս վե հաս է):

Ինչպես տեսնում ենք, այս մի քանի տողի մեջ բավականին խոր մաքեր կան շարադրված Սալար-Նովային հատուկ լակոնիկ ոճով. և ոչ միայն խորը մտքեր, որ գաղափար են տալիս Սալար-Նովայի մասին նաև որպես փիլիսոփայորեն խորհողի, այլև անարվեստ չէ այս դործը:

Բայց ամենից վիճելին, հետաքրքրականն ու կարևորը այս խաղում երկրորդ տողն է.

«Հասա բաե, հասա Յե, հասա սե»:

Կրկնակի չափով ցավալի է, որ մի վանկ պակասում է այս տողում, որ, ըստ երևույթին, ոչ թե մոռացել է երդն արտադրողը, ավելի ճիշտ, իր անգիր իմացածից շարադրողը, այսինքն երգչի որդին, այլ ուղղակի ամբողջ տողի իմաստը չհասկանալով՝ աղավաղել է այն: Եթե երգիչը այրուրենը դասե դաս սովորել է և մի քանի նմուշներ է բերում դրանից. ապա ինչու պետք է անպայման վերցնենք Վ կամ Ջ տառերը և ոչ ուրիշ տառեր. որոնք որևէ կերպով իրար հետ առնչվելու վերջին Ա տառը հասկանալի է՝ այն բերված է հանգակապ տողերի բոլոր թե՞նիստ բայերի լրացման համար («հասա սե»): Հայտնի է, որ վրացերենում չկա մեր կոշտ Ռ հրնչյունը, որի համար թե երգիչը և թե որդին երկու դեպքում էլ դրում են Վ, ուստի պարզ է՝ գրելով բաե, նկատի է ունեցել ռաե, որի ապացույցն է հենց տառի անունը՝ ռա և ոչ թե բե. իսկ ու տառը հավասար է հազար թվանշանին: Այստեղից էլ բացվում է այս ծածկագրի կծիկի տուտը. կասկածից վեր է, որ այս երկրորդ տողում երգիչը տվել է այն տարեթիվը,

Երբ գրվել է այս խաղը՝ Ռրովհեռն այս ընդ-ն պատահական տառ չէ վերցրած, այլ որոշակի նպատակով, ապա հազարից հետո չէր լինի 900 (Ջ), այլ կլիներ երկու ասարած դարն արտահայտող նշանը — թիվը, այն է՝ 2 (700)։ Ուստի պետք է կարդալ ոչ թե Ջ, այլ 2, որը Բվան Սեյադովը, եթե ոչ սխալով, ապա չհասկանալով, չիմանալով առդի դադանիքը՝ դարձրել է 2, որովհետև սա ավելի մոտ է Ռ տառին (նախորդը), քան թե 2-ն։ Բայց հենց սրանից հետո է, որ պակասում է մեկ վանկը, որը պետք է լիներ տասնավոր թիվ արտահայտող մի տառ։ Եվ որովհետև մենք մոտավոր չափով գիտենք երկու ծննդյան տարեթիվը՝ 1707-ից մինչև 1724 թվականը, իսկ ավելի հավանականը 1712-ից -1722 թվականները, ուստի հաշվի առնելով նախավերջին տողի 40-ը («Սայաթ-Նովա, տարիս էլավ քառասուն»), ուետք է ենթադրենք, որ խաղը գրված է 50-ական կամ 60-ական թվականներին, այն էլ առաջին հայացքից ոչ թե միավորով, այլ տասնավորով՝ 50 կամ 60։ Եվ եթե այսպես է, ապա պետք է կարդանք ոչ թե հասա ջե (չե), այլ «հասա Չաճա» կամ «հասա Չակսն», որ կստացվի 1750 կամ 1760 թվականը։ Կանգ առնելով այստեղ, պետք է ընդունենք, որ երկու ծնվել է ուղիղ 1710 կամ 1720 թվականին։ Բայց սա բոլորը չէ, հարց է ծագում, թե ինչու է գրվել ռաե և ոչ միայն ռա։ Արդյոք երկուսը ռաե բառում նկատի է ունեցել ե՞լ-ը (Ե), այսինքն 1000-ի վրա մի հավելյալ հինգ, որ կդառնա 1005, որպիսի ձևով տարեթիվ գրելը եղակի չէ միջնադարյան հայ գրականության մեջ։ Համոզված կարելի է ասել — ոչ, որովհետև այս դեպքում պետք է գրվեր ռաեչ և ոչ թե ռաե։ Նչ տառի հարցն ինքնին մերժվում է։ Մնում է միայն է-ն, որ հավասար է յոթ թվանշանի, այսինքն՝ բնագրում գրված է եղել «հասա Ռաե» (1007) և ուրիշ կերպ էլ դժվար է ենթադրել։

Անկախ նրանից, թե ինչ ձևով ռաե-ն արտագրած կամ «խմբագրած» կլիներ Օհանը, այս հարցը մեզ համար արդեն անվիճելի է դառնում, մանավանդ որ բնագրում էլ վրացատառ գրված է ռաե։ Չնայած վրաց այբուբենում և տառը չկա, բայց հենց ինքը՝ Օհանը, շատ հաճախ հայերեն և հնչյունն արտահայտելու համար՝ վրաց տառերով գրում է Բէ, Դժվարը և վիճելին տողի երկրորդ ոտքն է, որտեղ ոչ միայն 2-ի տեղ գրված է 2, այլև մի վանկանի բառ պակասում է։ Չաճա, թե՛ Չակսն։ Այս հարցն է, որ պետք է լուծել։

Չնայած հանդի սահունությունը, ավելի շուտ արտասանության սահունությունը, կարծես թելադրում է ընդունել Չաճեն (760), բայց 1760 թվականի և հետագայի ոչ մի թվագրված երգ չի հասել մեր ձեռքը։ Երկու, դոնե հայե ևն և աղբրեջաներեն թվագրված բոլոր խաղերի վերջին տարեթիվը 1759-ն է, որից հետո գրվածները նույնիսկ, կարելի է ասել, հազիվ թե մեր ձեռքն են անցել։ Մենք չենք կասկածում, որ նա գրել է նաև 1759 թվականից հետո, բայց այդ խաղերը պետք է փնտրել այլ տաղարանում և ոչ մեզ հասած երկու հայտնի ձևագրերում։ Այս տեսակետից շատ ավելի կոմպաներ են մնում Չաճա-ի, այսինքն 1750 թ. համար, որովհետև 1007-ը Չակսն-ին (760-ին) դումարելով կստացվի 1767 թ., որից 40 (տարին) հանելով, երկու ծննդյան տարին կստացվի 1727 թ., մինչդեռ նա 1742 թ. աղբրեջաներեն մի բարձրորակ խաղ ունի հորինած։ Եթե ընդունում ենք, որ այս խաղը հորինված է 1757 թ., ապա ստացվում է, որ Սայաթ-Նովան ծնվել է 1717 թվականին։

երգիչը հենց այս խմբականներին էլ ունի կյանքի և մաքուր խոր հար-
դերին նվիրած շատ խաղեր, խրատական մոտիվներ և նույնիսկ իր աղբյու-
րաներին ջատախմբման^{*} դրել է 1750 խմբականին:

Ուրիշ Դ՛ր.—

Մըաա էշխի քուրեն խալիս դառնալու,
Սիրաբս էլավ քե ու ալիբ, էրկու բեն,
Կամավ սովդեն մաա դարդըն բառնալու,
Ոււմ բըռնիմ սե ու ալիբ էրկու բեն:

5 Դադա պիտի խոսկըն դադամի չինե,
Շարբաբի միշումըն սամիլի չինե,
Ջորու նման չաաե իմ դեղեն ձին է
Մարի վուր բլի նու ալիբ էրկու բեն:

Ինչպես վուր կրակին չի դիմանա մում,
10 էնպես սադաթ բլի, ով որ խոսի հում.
Սայաթ-Նովեն ասաց էնդուր չէ պակասում
էրկու աչկես, էրկու ալիբ, էրկու բեն:

Սայաթ-Նովայի հայերեն դարահեծա խաղն է սա, որ բերում ենք մեր
վերծանությամբ, որովհետեւ, ինչպես վերջում կտեսնենք, Ե. Ասաաուրի
վերծանության մեջ կան որոշ խերություններ, չկարգացված մի բառ և մի
ամբողջ տող:

Տող 1. Սիրո քուրան մաա մաքրվելու—աղնվանալու (անկեղծ սիրով
ապրելու),

2. Իայց սիրտս ալիբից, դառավ խորոված.

3. Իմ կամքով սիրո մեջ մաա դարդ շալակելու—սիրո հոգսի ծան-
րությունը կրելու,

4. Էլ ում մեղադրեմ, էլ ում պատճառ բռնեմ:

5. (Սոսքի) վարպետ— իմաստուն պետք է լինի, որ անտիկ աշխարհի
իմաստունի պես խոսի,

6. Նուրբ մետաքս դործելիս բամբակի թելը հենքում չդնի (այսինքն
անիմաստ խոսքեր չասի):

7. Եվ իող ջորու նման չասի, թե չիմ մայրը ձին է», այսինքն իր
ծաղումով չպարծենա այն մարդը:

8. Որը անշնորհ է, անհամապատասխան է խակական մարդուն:

9. Այնպես ինչպես կրակին չի դիմանա մումը,

10. Այնպես էլ խեղանդամ կը դառնա (սխալի դոհ կը դառնա) հում
խոռոզ մարդը (անդրապետ ու անփորձ խոսողը):

11. Սայաթ-Նովեն ասում է՝ հենց այդ պատճառով է, որ չեն պակասում.

12. Իր երկու աչքերից ջրերը (արցունքները):

Երգի այս թարգմանությունը, որ տալիս ենք մենք, պետք է որոշ
ուղղումներ մտցնի բնագրի մեջ, վերացնի խերությունները, ինչպես նաև
խակական բացատրությունը տա այն բաների, որոնք մինչև այժմ սխալ են
հասկացվել Օրինակ՝

^{*} Զափածո կենսագրական—ընդհանրապես մարդուն վերաբերող և երբեմն իրեն
հեղինակին:

4-րդ տող. «ուսմ քըսնիմ սև ու աշիր էրկու բեն»:

Այս տողում մի վանկ պակաս է և նախորդ տողից ինքնին բխում է, որ այստեղ պետք է լինի և՛ բառը—«սեմ բոնիմ էլ»... կամ ափսիս ճիշտ՝ «էլ ուսմ բոնիմ սև ու աշիր էրկու բեն (սարար)»:

5-րդ տող. «Դադա պիտի խոսկըն դադամի շինե»:

«Դադամի» բառը մինչև այժմ չի թարգմանված, որովհետև դադամ (արար-) նշանակում է նաև քայլ, իսկ խոսքը քայլ շինել չի կարելի: Բընադրում կարգացվում է և կդադամի և կդադմի (վրաց. կոկորդային կոշակ-ով), բայց պետք է կարդալ դադիմի, ափսիս ճիշտ՝ կադիմ: որ նշանակում է անարկ, հին:

6-րդ տող. «Շարրարի միշումըն սամբիլ շինե»:

«Սամբիլ շինե» բառերն անիմաստ են, պետք է կարդալ իսասարիլ չեինե: Սարրարը նշանակում է մաքուր մետաքսաթել, մանելիս կամ հեշտում երբեմն խառնում են և իսամ թել (բամբակե), որով մետաքսը կեղծվում է. բնադրում սամ թիլ» է կարգացվում, որովհետև ձևադրում վրաց խ-ի (ծ) շրջան կազմող պիծը չի հասցվել ուղղահայաց գծին, և դառել է Ս (ն):

8-րդ տող. «Մարի վուր քլի նու աշիր էրկու բեն (նարար)»:

Այս տողում մի վանկ պակաս է և դա շաղկապ ՈՒ-ն է. պետք է կարդալ «նու ու աշիր»:

Այս տողի նաքաբ բառը բնկ. Լեոնյանը թարգմանել է դուռ, անխառն, մինչդեռ պարսկ. (բառացի) նշանակում է անհամասար, անհամապատասխան. նարար մարդ—սնշնորհք, անճոռնի, անօրինակ (վատ իմաստով) մարդ:

12-րդ տող. «էրկու աշկես, էրկու աշիր, էրկու բեն» (արար):

«Ար»—պարսկերեն նշանակում է ջուր, փոխարեքական իմաստով նաև՝ արցունք, քրքիչը, երևի հանդի և ուժեղացնելու (հոյնակի ստեղծելու) համար՝ կրկնել է, և ստացվել է, ջուր-ջուր, այսինքն՝ արցունքներ: Այսպես ճիշտ բացատրել է ընկ. Դ. Լեոնյանը: Հաղիվ թե երկիչը նկատի ունեցած լինի պարսկ. արիաբե բառը, որ նշանակում է վճիռ ջուր, էլի արցունք իմաստով: Շատ հավանական է, որ այս խաղից ևս պակասում է առնվազն մեկ ամբողջ տուն, որովհետև երեք տեղից բաղկացած խաղ, Սայաթ-Նովան համարյա թե չունի:

Մենք սրանով վերջացնում ենք 18-րդ դարի տեղանավոր երգչի միայն 8 հայերեն խաղերի տեքստային ուսումնասիրությունը, համարյա բոլորովին չանդրադառնալով նրանց բովանդակության և մանավանդ գեղարվեստական արժանիքներին: Նման աշխատանքի ձեռնարկին անտեղի չէ, մասնավորապես Սայաթ-Նովայի նման կլասիկի թողած ժառանգության համար. նկատի ունենալով նաև նրա յուրահատկությունը, բարդությունը և առավել ևս այն հանգամանքը, որ այդ խաղերը թարգմանվել և թարգմանվում են այլ լեզուներով՝ հաճախ ազավազված: Այս տեսակետից բավական է համեմատել հենց այստեղ մեզ դրազեցնող խաղերի վրացերեն թարգմանությունը, որ (մյուս բոլոր հայերեն խաղերի հետ) կատարել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Ֆեկը և 1935 թ. առանձին գրքով լույս ընծայել Թբիլիսիում, որպեսզի պարզ լինի այս բնույթի աշխատանքն անհրաժեշտությունը:

М. АСПАТЯН

Канд. филологич. наук

О НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ ПЕСНЯХ САЯТ-НОВЫ

РЕЗЮМЕ

Настоящая статья представляет собою главу из большой работы автора «Критика и толкование текста армянских песен Саят-Новы».

Первый сборник 46-ти армянских песен знаменитого армянского поэта-ашуга Саят-Новы, жившего в XVIII веке, впервые был издан в Москве в 1852 г. ученым—филологом Юр. Ахвердовым (Георг Ахвердян). Изданные Ахвердовым песни расшифрованы им по рукописи самого Саят-Новы, относящейся к 60-м гг. XVIII столетия. Из этих тетрадей поэт записал свои стихотворения, как грузинским, так и армянским шрифтом. Все армянские песни записаны исключительно грузинскими буквами, что затрудняет безошибочную расшифровку текста.

Кроме этой рукописи-автографа Саят-Новы, в 80-х гг. прошлого века, в Петербурге, в фондах грузинских рукописей Азиатского музея Академии Наук Н. Я. Марром был обнаружен второй сборник песен Саят-Новы, в котором наряду с 26-ю армянскими, 26-ю азербайджанскими песнями было и 26 песен на грузинском языке. Грузинские песни совершенно отсутствовали в первом сборнике. На этот второй сборник в свои студенческие годы обратил внимание филолог Г. А. Аствацатрян (Георг Асатур), который в числе 26-ти армянских стихов Саят-Новы обнаружил 8 новых, до этого еще не известных в литературе стихов, которые были изданы Г. А. Аствацатряном лишь 12 лет спустя в армянском журнале «Этнографическое обозрение» (Тифлис, 1903, кн. 10).

2-й рукописный сборник написан не самим Саят-Нова, а его младшим сыном Иоанном, в Петербурге в 1823 г., по поручению грузинского царевича Теймураза, и потому понятно, что все эти произведения поэта были написаны грузинскими буквами. На первой странице рукописи помещена следующая памятная запись на грузинском языке— «Сия книга принадлежит сыну грузинского царя Теймуразу. Эти стихи Саят-Новы записал его сын Иоанн, в честь памяти своего отца—Саят-Новы».

В настоящей статье автор рассматривает вопрос 8-ми песен, которые как при первом, так и при последующих изданиях, опубликованы не только со значительными искажениями, но и толковались частично неправильно, особенно те, которые были составлены в форме сложного каламбура и абцедарий. Автор на основании фотографий всех страниц 2-го рукописного сборника песен Саят-Новы исправляет не только дефекты расшифровки Г. Асатура, но также и ошибки, являвшиеся при составлении сборника сыном поэта Иоанном, который, возможно, даже не имел перед собой рукописи Саят-Новы, а записывал стихи по памяти.

В статье приводятся факты, доказывающие некоторые языковые

отличия этих 8-ми песен от всех остальных песен, записанных самим поэтом, который писал почти на чистом тифлисско-армянском наречии. По всей вероятности, сын поэта несколько изменил язык песен, приблизив его к литературному армянскому языку. Не исключается также возможность и того, что большая часть этих языковых коррективов, внесенных позднее, принадлежит самому Саят-Нове. И в том и в другом случае, это явление чрезвычайно интересно с точки зрения истории развития армянского светского литературного языка, победа которого завершилась лишь в 60-х—70-х гг. прошлого века.

Автор в своей статье исправляет некоторые искаженные в тексте арабские, персидские и азербайджанские слова, обильно употребляемые поэтом, а также переводит сложные и устаревшие слова и термины, что облегчает правильную расшифровку всех строк исследуемых песен.

В статье восстанавливается текст весьма сложных каламбурных, а также других почти ребусных стихов, составленных в форме своеобразных восточных абecedарий, также как восстанавливаются частично искаженные Иоанном (а также Г. Асатуром, при расшифровке) рифмы и метрики отдельных строк песен.

На основании анализа одного стихотворения (абecedарий) автор статьи считает окончательно разрешенным один из спорных вопросов биографии поэта—вопрос степени его грамотности. Оказывается, что Саят-Нова не только свободно говорил на армянском, грузинском, азербайджанском и персидском языках, но также читал и писал на всех этих языках. Автор доказывает, что Саят-Нова, во всяком случае, специально обучался армянской грамоте и не был самоучкой, как предполагалось до сих пор.

На основании подробного анализа одного, чрезвычайно ценного по содержанию каламбурного стиха, автор разрешил также самый спорный биографический вопрос,—вопрос даты рождения Саят-Новы. До сих пор исследователи рождение поэта относили к промежутку времени от 1712 до 1722 года, в статье же доказывается, что Саят-Нова родился в 1717 году.